

դուածքների շնորհիւ³⁹: Իհարկէ, յիշուած Սենեքերիմը՝ խիստ ենթադրաբար, բայց կարող է համարուել թագաւոր, եւ այդ դէպքում՝ գուցէ, նաեւ ո՛չ թէ Վասպուրականի Արծրունի (վերջին), այլ, ինչպէս եւ վերը նշուած Փիլիպպէն ու Ատրներսէհը, «Աղուանից» (Հայոց Արեւելից կողմանց) թագաւոր: Այսպիսի վարկածի ընդունման կամ նորայայտ փաստերով հաստատման դէպքում մենք աւելի հակուած կը լինէինք նրան նոյնացնել ոչ թէ Փառխոսի թագաւորութեան հիմնադիր Յովհաննէս Սենեքերիմի (Ժ. դ. երկրորդ կէս) կամ նրա ժամանակակից, Անանիա Մոկացու եւ Իբն Հաուքալի յիշատակած՝ Խաչէնի Գրիգոր իշխանի որդի Սենեքերիմի հետ, այլ վերջինիս՝ այլուր չյիշուած, սակայն որոշ հաւանականութեամբ ենթադրելի նոյնանուն թոռան (ԺԱ. դ. առաջին կէս):

Ինչ վերաբերում է Խաչէնի թագաւորութեան անկման ժամանակին, ապա, առաւել մեծ հաւանականութեամբ, այն կարելի է համարել Փառխոսի թագաւորութեան կործանման ժամանակի հետ, որն ընկնում է մօտաւորապէս 1048 թուականին եւ կապուած սելջուկեան Ալփ-Արսլան սուլթանի աւերիչ արշաւանքի հետ: Ըստ Վարդան պատմիչի՝ 1044-ին Բիւզանդիայի կողմից Անիի գրաւմանը յաջորդած շրջանում Գանձակի Շաղաղեան Փաղլուն ամիրան, անկասկած, սելջուկների հետ համագործակցելով ու դառնալով նրանց առաջապահը Կուրի հովտում, իր

տիրապետութիւնն է հաստատում նախ՝ Փառխոսում, ապա շրջակայ գաւառներում՝ լուրջ սպառնալիք դառնալով արդէն Լոռու, Քարթլիի եւ Կախէթ-Հերէթի թագաւորութիւնների համար (բնագրի սկիզբն է. «Եւ սիրոյ աղագաւ գնացեալ առ նա Փիլիպպէ [իմա՝ Փառխոսի թագաւորը]՝ որդի Գրիգորոյ, ըմբռնէ զնա ի կապանս զկնի մահուան հօրն եւ առնու ի նմանէ զՇաչուաղ [գուցէ, իրօք, Օղոուազը Գեղարքունիում] եւ զՇօթա [գուցէ, իրօք, Սոթքը]: Կոչեցեալ առ ինքն զԳագիկ՝ որդի Համամայ, զտէրն Գանձեաց [սրբագրելի՝ Տանձեաց, իմա՝ Տանձիքը Սօթքի հիւսիսարեւելեան անկիւնում]՝ սպանանէ եւ առնու զերկիր նորա»⁴⁰: Պատմիչի խօսքերով՝ «Եւ այսպէս զօրացեալ՝ տիրէ Խաչէնոյ եւ Գորոզոյ եւ Սեւորդեացն եւ գոռ զնէ ընդ Գագկայ թագաւորին Ջորոյ գետին [իմա՝ Լոռու] եւ ընդ Կիւրիկէի թագաւորին Աղուանից [իմա՝ Հերէթի] եւ ընդ Բագարատայ թագաւորին Վրաց եւ նեղէր զնոսա»⁴¹: Պարզ է, որ Վարդան Արեւելցու՝ «տիրէ Խաչէնոյ եւ Գորոզոյ» խօսքերը կարելի է հասկանալ ոչ միայն Խաչէն եւ Դիզակ երկրամասերի ռազմակալման, այլեւ նրանցում թագաւորական իշխանութեան վերացման իմաստով, ինչպէս որ դա հաստատապէս գիտենք երրորդը նշուած Փառխոս-Սեւորդիքի համար, ուր Գրիգորի որդի Փիլիպպէից (1003-1048) յետոյ թագաւորութեան մասին այլեւս ոչինչ յայտնի չէ: Նշենք նաեւ Սիւնիքի Գրիգոր թագաւորի «գոքանչ» Սոփի թագուհուն՝ Սիւնիքում ապաստանելը եւ 1081-ին Վահանավանքում թաղուելը:

* * *

Սակայն, ի տարբերութիւն Փառխոսի, Խաչէնի թագաւորական տոհմն, ամենայն

39 Տե՛ս Վարդան Այգեկցի, Գիրք հաստատութեան եւ արմատ հաստոյ, քննական բնագիրը կազմեց Շ. քհն. Հայրապետեանը, Աերածութիւնը՝ Յ. Քեօւէեանի, Եր., 1998, էջ 206 («Ի Հաւատոյ թղթէն Տիրանոյ [տարբ. Տիրանայ] Հայոց վարդապետից, գոր գրեաց առ Սիւնաքերեմ»), էջ 383 («Ի Հաւատոյ թղթէն Տիրանոյ [տարբ. Տիրանայ] Հայոց վարդապետի, որ առ Սենեքարիս»), Ատե՛լ էջ 262, 405, որտեղ թղթակցի անունը նշուած չէ: Հմմտ. Ատե՛լ REArm., 1922, T. 2, էջ 248; Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ե, Եր., 1962, էջ 158:

40 Մեծիմ Վարդանայ Բարձրաբերդեցոյ Պատմութիւն տիեզերական, էջ 134-135: Հմմտ. Բ. Ա. Ուլուբաբեան, Խաչէնի իշխանութիւնը, էջ 92:

41 Մեծիմ Վարդանայ Բարձրաբերդեցոյ Պատմութիւն տիեզերական, էջ 135: